



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Խրոնիկ Ժրի յաւելլում ՎԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹՅՈՒՆԻ

618.2

S - 38

ԲԺ՝ ԿԱՏԱՆ ԱՐԾՐՈՒՄԻ

ԲՅՆԻ ՉՐՈՅՏԱՆ

Յ Ղ Ի

ՈՒ

ԾՆՆԴԿԱՆ ԿՆՈՋ

ՎԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԵՐ

Պատկերազարդ

№ 12

1904

ԱՌԱՆՋԻՆ—ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

JUL 11

8228

610
192-55

618.2
5-38
my

30 JUL 2010
8105 .80 .41

Հիմնարդի ներկայացված «Առողջապահիկ Թեր»-ի

ԲԺԾԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ № 12

010
21-30

ՅՂԻ ՈՒ ԾՆՆԴԿԱՆ ԿՆՈՋ


1003
10396

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Պատկերազարդ

Կազմեց

ԲԺ.-ՊԵՏ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ



ԹԻՖԼԻՍ 1904 թ.

Տպարանի „ՀԵՐՐԵՍ“ Միջ. տպ. № 81.

(26)

0105 JUL 01
14 .08. 2013

010
12 221

Дозволено Цензурою, Тифлисъ. 25-го Юня, 1904 года.

Ա Ռ Ա Ջ Ա Ֆ Ա Ն

Յղի ու ծնողական կնոջ առողջապահութիւնը, որի մասին մենք արդէն առիթ ենք ունեցել համառօտ կերպով խօսելու «Առողջապահիկ»-ի մէջ, զարմանալի կերպով արհամարհուած է մեր ժողովրդի կողմից: Աղետալի ու արհաւիրձ տեղեկութիւններ ենք ստանում ամեն տեղերից, նորաշի կնոջ ստակալի հակաառողջական կենցաղի ու դուրսեան մասին: Նա ապրում է կեղծի մէջ, տնում է ծանր աշխատանքի տակ, չկա հոգատութիւն, չկա խղճմանք: Մեր աղջիկները մասալ հասակում **կի՛ն** են դառնում առանց պատասխանատւան, դու ինքնամեծացած չհասած, զուրկ որ եւ է հասկացողութիւնից այն մեծ, այն վստակալից եւ պատասխանատւ դերի մասին, որ վիճակուած է նրանց կատարելու թէ իբրեւ **ամուսին** եւ թէ մանաւանդ իբրեւ **մայր**: Աւելի հմուտ է այլը, բայց նա ընդհանրապէս գուր չունի դէպի իր անմեղ ու անվնաս կի՛նը, որին վերցրել է կարծես իր հաճոյքի համար միայն: Եւ խեղճ նորանաս, երբեմն էլ դեռահաս աղջիկը մի օր սարսափով իրան յղի է գտնում: Նրա յղութիւնը չի գտնում ամուսնու ու շրջապատողների կողմից ոչ յարգանք, ոչ կարեկցութիւն: Նա մնում է նոյն հաճոյքի գործիքը, մինչեւ յղութեան վերջին տմիւններ: Նրան շարունակում են պահել նոյն կեղծի մէջ, ստիպում են կատարել նոյն աշխատանքը, ու չդարցնելով կամ չհատկանշելով, որ յղութիւնը մեծ դրոյիւն է գցել նրա ամբողջ կազմութեան մէջ եւ սպառել է նրա ոյժերը... Վերջապէս գալիս է ծնունդը, եկունքի սաժանելի ցաւերը—մեծ, սխալելի բնական գործողութիւնը, որ վստակալից չէ բոլոր մեծի մասամբ, բայց որ վստակալից ու մահառիթ են դարձնում տղաները, տղաները ու պատանեւորները: Եւ ի՛նչ. նոյն կեղծը, նոյն վայրենի վերաբերմունքը, նոյն անհարեւորութիւնը! Նա պատկած է կեղտոտ սեւեռակում, կեղտոտ անկողնու մէջ, կեղտոտ հագուստով: Տունը լրջուում է կեղտոտ պատանեւորով, որով իրանց հետ հազար տեսակ

վարակներ, քոյներ են բերում—կայցնում խեղճ ծննդկանին: Յե-
տոյ գալիս է տասներ, որ հասկացողութիւն չունի ո՛չ
մահութեան եւ ոչ ծննդաբերութեան մասին, գալիս է ու իւր,
սաւ օր սապոնի երես չհետած, գաւելի, կեղտակալած եղուն-
կներով փերծում է—պատահում ծննդկանի, առանց այն էլ
հաճախած, սեռական մասերը, ու վերերի մէջ լցնում իւր
ձեռների կեղտը, որ պիտի գնա, բուժարտի ու սպանի անմեղ
զոնին!

Զոհերի թիւը անագին է, զարհուրելի: Մասաչ կեանքեր
գաւելի սմարտութեան ու զոհութեան նահատակներ են դառ-
նում: Հրաւժով փրկում են, այո՛, շատեր: Բայց փրկու՞մ են
արդեօք: Բոլորովին: Նայեցէ՛ք ձեր շուրջը, հարց ու փորձ արե՛ք
ծանօթ կանանց: Ո՛րք նրանցից հիւանդ չէ, ո՛րք անվերջ չի
սանջում հարիւր տեսակ «կանացի» հիւանդութիւններից, ու-
րոնց մեծ մասը ծննդաբերութիւնից ու զգուհարկի անխղճու-
թիւնից է առաջ եկած:

Այս հանրային դժբաղդութեան դէմ կռուելու համար է,
որ Բժշկապետ Գրիգոր Գասպարեան Տէր-Գրիգորեանցը գրել է
այս գրեպը: Ընթերցողը կզսնի սրա մէջ մի շարք գործնական
փրկարար խրատներ, շարադրած պարզ ու հասկանալի ոճով,
խրատներ, որ նա դուրս է բերել երկարամեա փորձից ու դի-
տումներից, այսինքն կեանքից:

Թող այս գրեպը ամենքի մէջ զգուհութիւն, խնամք ու
յարգանք յարուցանի դէպի սուրբ **մայրութիւնը** եւ դրանով
շատ կեանքներ փրկուած կլինեն վայրժամ մահից կամ յալիսե-
նական տուժանքից!

Գ. Բ. Վ. Արծրունի

ՅՂԻ ՈՒ ԾՆՆԴԿԱՆ ԿՆՈՋ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

1. ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչ ազդեցութիւն ունի մահուանութիւնը
մահուանացողների վրա:

Ձանազան երկրներում հաւաքած տեղե-
կութիւններով ապացուցուած է, որ մահուանա-
ցածները աւելի երկարակեաց են լինում, քան
մահուրիները և այրիները: Բացի այդ, մահու-
նացածները աւելի քիչ են յանցանք գործում,
ինչպէս զոդութիւն, աւազակութիւն, սպա-
նութիւն, քան մահուրիները և այրիացածները:

Մենք ասացինք, որ մահուանացածները
աւելի երկարակեաց են, քան մահուրիները,
բայց ապացուցուած է, որ մատաղահաս պատկ-
ուողները (թէ այր և թէ կին) աւելի շուտ
են մեռնում, քան թէ նոյն տարիներ
անձինք, որոնք դեռ մահուանադած չեն:
Միայն քսան—քսանըմէկ տարուց սկսած
մահուանացող կին մարդիկ աւելի են ապրում,

քան համապատասխան հասակի ամուրիները:

Այնպէս որ, մեր երկրի սովորութիւնը— տասներկու, տասնընորս տարեկան աղջիկներին մարդի տալը—մի վերին աստիճանի փեսաքեր սովորութիւն է, և սրանց մեծ մասը կամ մահանում են ծննդաբերութեան ժամանակ, կամ, որ աւելի յաճախ է պատահում, երկարատե հիւանդութիւններից տանջւում են: Մենք շատ անգամ լսել ենք մեր հիւանդներից, որ նրանք ամուսնանալուց մի քանի ամիս, մինչև անգամ մի քանի տարի անցնելուց յետոյ են դաշտան ստացել: Եւ այդ բարբարոսութիւնը մեր գիւղական ժողովրդի մէջ մի սովորական երեւոյթ է:

2. ՅՂՈՒԹԻՒՆ

Ամուսնական կեանքի գլխաւոր երեւոյթները յղութիւնն ու ծննդաբերութիւնն է: Ե՞րբ կարելի է կնոջ յղի համարել: Ամենից լաւ նշանն այն է, որ դաշտանը յետ է փնում: Բայց պատահում են և այնպիսի յղիներ, որոնք, չնայելով որ յղի են, շարունակում են «տեսնել» մի և երբեմն աւելի անգամ, բայց այդ դաշտանը սովորականին նման չէ, այլ պակաս է քանակութիւնով և աւելի կարճ է տևում: Բացի

այդ, յղի կնոջ սիրտը խառնում է, նա փախում է, մահաւանդ առաւօտները, երբեմն մի տեսակ տարսափ է զգում, երբեմն էլ, կարծես, մարմինն այրում է, երեսը շուտ շուտ գունափոխում, կարմրում է կամ գունատւում, սիրտը բաբախում է, պատահում է սրտի անձկութիւն, ուշաթափութիւն, երբեմն ատամն է ցաւում, շատ անգամ մի աննշան պատճառից նեղանում է, երբեմն ուզում է լաց լինել, երբեմն էլ ամենասովորական հոտերից սիրտը խառնում է:

Յղութիւնը ուրիշ նշաններ ևս ունի և նշանաւորները սրանք են. մէկ կամ մի քանի անգամ դաշտանը չի երեւցել կամ շատ քիչ քանակութիւնով է երեւցել, միևնոյն ժամանակ փոքր փորը, կասես, ուռչում է կամ լրցւում է, ծծերը նոյնպէս լցւում են և նրանց պատող մաշկի վրա շատ կապոյտ երակներ են երևում ու պտուկների և նրանց շրջանակների մաշկը թուխ գոյն է ստանում, շրջանակների վրա գտնուած գեղձերը խոշորանում են:

Երբ վերը յիշած բոլոր նշանները միասին են յայտնւում, այդ յղութեան ապացոյց է, բայց նրանցից ամեն մէկը առանձին վերջրած ոչ մի նշանակութիւն չունի:

Առաջին անգամ յղիացած կինը երբեմն

յղութեան սկզբում փոքր փորում ցաւեր է զգում և կարծում է, թէ հիւանդ է: Միայն աչքի առաջ ունենալով, որ տիկինը մինչև այդ ժամանակ իր դաշտանը կանոնաւոր կերպով տեսնում է եղել, և ամուսնանալուց մի քանի ժամանակ յետո զաղարել է ու փոքր փորում ցաւեր ունի, չպէտք է իրան հիւանդ համարի (մանաւանդ երբ տաքութիւն կամ դող չունի), այլ պէտք է համբերութիւնով սպասի մինչև յետագա ամիսը:

Յղութեան աւելի ճիշտ նշանը երեխայի շարժումն է մօր արգանդում: Այդ պատահում է յղութեան տասնեութն ու քսանեկերեք շաբաթների միջոցում: Սկզբում յղի կինը միայն մի փոքր հարուած կամ շարժում է զգում փոքր փորում, իսկ ժամանակով այդ շարժումները աւելի ու աւելի ուժեղանում են և տարածւում ամբողջ փորի մէջ ու երբեմն նմանում են կատարեալ հարուածի: Սակայն յղի կինը կարող է սխալուել ու աղիքների շարժումը երեխայի շարժում համարել: Պէտք է զգուշանալ այդ սխալից:

3. ԿԵՐԱՆՈՒՐ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ

Յղի կինը սովորական կերակուրներից, պան-

րից, մսից զգուժ է, և ընդհակառակը, ամենադժուարամարս կերակուրներ է ցանկանում ուտել, ինչպէս լոբի, մախովս, չորացրած հուն, տանու թթու դրած բուսեղէն ուտելիքներ (կաղամբ, ծիծակ, բոխ և այլն):

Մեր ժողովրդի մի մասը այնպէս է մտածում, որ յղի կինը ինչ որ պահանջի ուտելու, պէտք է տալ: Այդ սխալ է և այդ պահանջին չպէտք է միշտ բաւարարութիւն տալ, այլ միշտ պէտք է ի նկատի ունենալ, թէ նա ինչ է պահանջում և նրա մարսողութեան զործարանները ի՞նչ գրութեան մէջ են: Եթէ նա օրական մի քանի վարունկ է ուտում և փսխում, ի հարկէ, պէտք է համոզել որ չուտի, որովհետև նա հէնց այդ պատճառով ուրիշ կերակուրներ էլ չի կարող մարսել: Աւելիլաւ է, որ նա ուտի մսի սոււց, լաւ եփած դառան կամ հաւի միս, թերխաշ ձու, բրնձով ապուր, թանէ սպաս, թարմ ձուկ (բայց ոչ չորացրածը կամ դոշը, որ շատ դժուարամարս են): Եփած կանաչեղէններ, ինչպէս կանաչ լոբի, բադրձան, կարելի է զործածել, իսկ կարմիր լոբին, սիսեռը արգելուած են: Մրգեղէններից, այն էլ լաւ հասած, կարելի է ուտել հետեւեալները. կեռաս, սալոր, ձմերուկ, թուզ և խաղող (իհարկէ կորիզները

չպէտք է կուլ տալ): Իսկ ծիրան, դեղձ և սեխ—շատ չափաւոր քանակութիւնով, այն էլ լաւ հասածները: Կարելի է տալ նոյնպէս և խնձոր ու տանձ, որ պէտք է դարձեալ լաւ հասած լինեն և փոքր քանակութիւնով: Իսկ զկեռը և սերկէիլը բոլորովին արգելուած են:

Մեղանում սովորութիւն է խորոված կամ տապակած միսը նախադասել: Ճշմարիտ է, խորովածը կամ տապակածը աւելի համեղ է և աւելի աննդարար, բայց դժուարաձնար է, ուստի, երբ յղի կինը կերածը դժուար է մարսում, պէտք է լաւ խաշած կերակուրներ գործածի, մանաւանդ երբ ստամոքսը պակաս են և լաւ ծամել չի կարող: Յղի կանայք, որոնց մարսողութիւնը թոյլ է, չպէտք է գործածեն ճաշի ժամանակ հում կանաչի, բողկի, վարունի, որովհետեւ սրանք դժուար են մարսում և կանաչեղէնի ու մանաւանդ բողկի մէջ զանաւոր կծու նիւթերը կարող են աղիքները և երիկամունքները գրգռել: Նոյնպէս արգելուած է կերակուրների հետ պըխպիղ, մանանիխ և նմանները գործ դնել:

Ամենալաւ ըմպելիքը ջուրն է, բայց յղի կինը եթէ սովոր է, կարող է և զինի խմել, միայն չափաւոր քանակութիւնով:

Թէյ և սուրճ—միայն թոյլ, և եթէ հնար կա, կաթով խառնած, իսկ արաղ կամ արագով պատրաստած խմիչքներ ամենեւին չի կարելի գործածել:

4. ՀԱԳՈՒՍՏ

Յղի կնոջ հագուստը պէտք է նրան պաշտպանի ցրտից և տոթից: Սակայն յղի կինը սովորականից աւելի տաք պէտք է հագնուի: Ամեն մի հանդերձ, որ ճնշում է կուրծքը և փորը, առհասարակ փնասկար է կնոջ առողջութեան, իսկ յղի կանանց համար այս ֆնասն աւելի ևս մեծ է: Կուրծքը ճնշող հագուստը արգելք է լինում ծծերի և նրանց պտուկների կազմակերպուելուն, ծծերը պէտք աճեն, կակղեն, նրանց մէջ պէտք է կաթի խողովակներ զոյանան, կաթի գեղձերը պէտք է զարգանան և ծծի սրտուկները իրանց շրջակայից բարձրանան: Ի հարկէ այդ ամենը այն ժամանակ կիրաւորուի, երբ արեան շրջանառութիւնը նրանց մէջ ազատ է և նրանք չեն ճնշուած, միւլեոյն ժամանակ երբ փորը սեղմուած չէ նեղ հագուստից, այն ժամանակ ստամոքսի աղիքների շարժումը, ուրեմն և մարսողութիւնը, արեան շրջանառութիւնը, փորոտիքի

սեփական գործակատարութիւնը բնական ընթացք կունենան, իսկ հակառակ դէպքում այդ ամենը կխանգարուի: ”

5. ՈՏՆԱՄԱՆ

Յղի կնոջ ոտնաւանը պէտք է պաշտպանի նրան ցրտից ու խոնաւութիւնից: Բարձր կրունկով կօշիկները շատ անգամ մեծ փնաս են բերում, որովհետեւ յղի կինը շատ հեշտութեամբ կարող է վայր ընկնել, ուստի նա պէտք է խոյս տա այդպիսի կօշիկներ հագնելուց: Պէտք է իմանա, որ այդ շրջանում վայր ընկնելը արիւնհոսութիւն, մինչեւ անգամ վիժումն կարող է առաջացնել: Ծնկան կապերը չպէտք է սեղմած լինեն, որովհետեւ սրունքներն երակները կլայնանան և ժամանակով մեծ նեղութիւն կպատճառեն:

6. ՄԱՋԵՐԸ

Մազերը պէտք է մաքուր պահուեն, իր ժամանակին հարկաւոր է լուանալ և սանրել, որովհետեւ մազերի անմաքրութեան հետեանքը այն կլինի, որ ծննդարերութիւնից յետո մազերը կթափուեն:

7. ՇԱՐԺՈՒՄՆ ԵՒ ԶԲՕՍԱՆՔ

Յղի կինը պէտք է ամեն օր չափաւոր շարժողութեան մէջ լինի, որպէսզի մարմնի բոլոր գործարաններն ու մասերը կատարելապէս սննդառութիւն ունենան և իրանց նշանակած պաշտօնները կատարեն: Զբօսնող ու շարժողութեան մէջ գտնուող կնոջ հոգեկան դրութիւնն աւելի աշխոյժ և զուարթ կլինի, քան անշարժ մնացողի, ամբողջ ժամեր և օրեր անգործութեան ու քնի մէջ անցկացնողի: Շարժողութեան պակասութիւնը տխուր ու մեղամաղձոտ է դարձնում յղի կնոջ, մնայլ մտքերը պաշարում են նրան, և նա իրան թոյլ ու հիւանդոտ է զգում: Ընդհակառակը, պէտք է ո՛չ միայն տանը չափաւոր կերպով աշխատել, այլև ամեն օր պէտք է զբօսնել զուրսը մաքուր օդում և այդպիսով կազդուրել մարմինը: Պէտք է հեռու կենալ ծանր աշխատանքից, նոյնպէս և ծանր առարկաներ բարձրացնելուց, ինչպէս և ուժեղ ու արագ շարժումներէից, օր. չափել, չվազել, չթռչել: Բացի այդ, շատ փնասակար է արագութիւնով բարձր սանդուղներով բարձրանալ: Լեռնոտ երկրներում յղի կինը պէտք է շատ զգոյշ լինի և աշխատի հարթ տեղերում զբօսնել: Իսկ եթէ ստիպուած է սարը բարձրանալ

ու իջնել, պէտք է համար քայլերով զնա և յաճախ կանգ առնի ու նստի հանգստանա: Լեռներին վրա զբոսնելը շատ անգամ ոչ-յղի կանանց էլ է ֆլաստում, արիւնհոսութիւն առաջ բերելով, իսկ յղի կանայք կարող են վիժումն ունենալ: Նոյնպէս արգելուած է ձի հեծնելը, խորը կռնակը, խորդուբորդ ճանապարհներով կառքով կամ սայլով արագ ընթանալը: Եթէ յղի կինը կատարելապէս առողջ է, հարկաւոր է որ նա անպատճառ զբոսնի: Ընդհակառակը, եթէ նա տենում է, որ թոյլ է, պէտք է մի կամ մի քանի օր տանը հանգստանա և ապա դուրս գա, սակայն ամեն անգամ այնքան պէտք է զբոսնի, որ առանց յոգնելու կարողանայ տուն վերադառնալ: Յղի կինը պէտք է իր ժամանակին պառկի քնելու և քնի ոչ պակաս, քան ութը ժամ, իսկ եթէ նա նուազ է, այն ժամանակ պէտք է նոյն իսկ տասը ժամ քնի:

8. ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Մարմինը մաքուր պահելը ամեն մի անհատի պարտաւորութիւնն է, բայց յղի կինը աւելի ևս մաքրասէր պիտի լինի: Յղութեան սկզբում լողարանի մէջ երկար նստելը խիստ

արգելուած է, որովհետև կարող է արիւնհոսութիւն և վիժումն առաջ գալ, տաս—տասնեհինգ րոպեից աւելի չպէտք է նստել, և ջրի ջերմութիւնը 26° կամ 28°-ից աւելի չպէտք է լինի: Յղութեան վերջին վեց շաբաթը շատ օգտաւէտ է համարւում շաբաթը երկու կամ երեք անգամ լողարանի մէջ նստելը 10 կամ 15 րոպէ և ջրի ջերմութիւնը պէտք է լինի 28°: Նոյնպէս ամեն օր, օրը մի կամ երկու անգամ մարմնի յայտնի մասերը զով ջրով և սապոնով լուանալը շատ օգտաւէտ է: Եթէ յղի կինը ոտները լուանալ կամենա, պէտք է անպատճառ զով ջրով անի այդ և շուտով լաւ ցածքեցնի: Իսկ ով առհասարակ սառը ջրին սովոր է, նա կարող է շարունակել և յղութեան շրջանում սառը ջուր դործ ածել:

Չեռների մաքրութեան համար պէտք է ստենք, որ սովորական առաւօտուա երես լուանալու ժամանակ ձեռքեր լուանալը և դորանով աւելի օրը բաւականանալը շատ քիչ է և անբաւարար: Միմիայն ջրով լուանալը ևս բաւական է, այլ հարկաւոր է անպատճառ սապոնով լուանալ, այն էլ ոչ թէ օրը մի անգամ, այլ մի քանի անգամ, ուտելուց առաջ և ուտելուց յետո (այսինքն, նախաճաշից, ճաշից և ընթրիքից առաջ և յետո), նոյնպէս և մի որևէիցէ

գործ կատարելուց յետո, երբ ձեռները կեղտոտուում են: Չմոռանանք, որ կեղտոտ ձեռներով մարմնի մի որեիցէ մասը քորելը կամ քիթը փորելը և այլն, մեծ վնասներ կարող են պատճառել ամենքին և նոյն իսկ ծանր հիւանդութիւններ առաջացնել, ինչպէս են. կարբունկուլ, կարմիր քամի, որ կտարածուի երեսի, գլխի վրա և այլն: Կեղտը յղիններին աւելի ևս մեծ վնասներ կարող է հասցնել: Եղունկները պէտք է կարճ կտրած լինեն, որովհետեւ նրանց տակ կարող է կեղտ հաւաքուել և կազմել սև սև շերտեր, որից ամեն տեսնող զգում է: Այդպիսի մատերով մարմինը շփելն անգամ շատ վնասաբեր կարող է լինել:

Անշուշտ, պէտք է բնակարանը—թէ նրնջարանը և թէ այլ սենեակները—ու միայն օրը մի անգամ, այլ անպատճառ առաւօտեան և երեկոյեան մաքրել, բաց անելով պատուհանները թէ ամսու և թէ ձմեռ ժամանակ, աւառը—նաւ գոները: Յղի կինը երբեք չպէտք է մնա այնպիսի սենեակներում, ուր շատ մարդ կա, ինչպէս. հարսանիքում, տօնախմբութիւններին, խնջոյքներին, թատրոնում, որովհետեւ այդ տեղերում օդը շատ շուտ է ապականուում, կարող է նրան սրտի բաբախում, նոյնիսկ ուշաթափութիւն պատճառել:

Յղի կինը պէտք է հեռու կենա կրքերից, այն է. բարկութիւնից, տխրութիւնից, սարսափից, նախանձից, ատելութիւնից, որովհետեւ այդ բոլորը թէ իրան է վնաս և թէ (աւելի ևս) նրա արգանդում աճող մանկան: Վեց ասիսը լրանալուն պէս պէ՛տք է սեռական յարաբերութիւնները բոլորովին դադարեմ սինչել ծննդից յետ քառասունը վերջանալը:

9. ԿՈՒՐԾԻԸ ԽՆԱՄԵԼԸ

Յղի կինը պէտք է առանձին ուշադրութիւն դարձնի իր կրծքին: Ամեն օր պէտք է գոլ սապոնաջրով լուանա թէ կուրծքը և թէ կռնատակերը ու կռկուղ երեսարբիչով ցամաքեցնի: Եթէ ծծերի պտուկները տափակ են, պէտք է վերջին վեց կամ չորս շաբաթը կամ ծծող շիշի մեքենայով (կոտոշ) կամ մատերի ծայրերով պտուկները դուրս քաշել, աշխատելով նրանց երկարացնել, որպէսզի մանուկը կարողանա բերանով բռնել: Նոյնպէս այդ միջոցին պտուկները հարկաւոր է սապոնաջրով լուանալուց և ցամաքեցնելուց յետո, երկու օրը մի անգամ արագով կամ թոյլ (60°) ապիրտով թրջել: Այդ նպատակով բամբակը թաց

1003
10396



են անուամբ արաղի կամ սպիրտի մէջ և մի հինգ ընկերակցութեամբ ծծերի վրա: Հինգ ընկերակցութեամբ վեր են առնուում, թողնում են, որ ծծերը ցամաքեն և ապա հազնուում են: *):

10. ՄՍԱՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Յղի կինը ամենից շատ պէտք է ունի դարձընի, որ կանոնաւոր կերպով, ամեն օր բնական կարիքը կատարի, նոյնպէս ուշադիր լինի մէզի քանակութեան վրա: Շատ անգամ յղի կանայք փորի ամրութիւն են ունենում և մի քանի օր շարունակ դուրս չեն գնում: Այդ հանգամանքը շատ փնասներ կարող է հասցընել նրան, ուստի հարկաւոր է դէմն առնել: Դրա համար պէտք է բուսեղէն եփած կերակուրներ գործ ածել, այն է. կանաչ լոբի, բադրջան, իսպանաղ և այլն, կամ ամեն օր կարագ ուտել, ճաշից յետո—խորոված խնձոր, շաքարով եփած սալոր և ուրիշ եփած մրգեղէններ գործ դնել, վերջապէս կարելի է գրեթէ կամ հոգնա բանեցնել:

Հաստկաւորները սովորաբար քսանընթաց ժամում եօթն և կէս թէյի բաժակ մէջ են

*) Ով կարող է, թող տանջօթով առնի ու լուծի ջրի մէջ (1 մաս տան. 10 մաս ջուր):

արտադրում ձմեռ ժամանակ, իսկ աձաւը քրքունելու պատճառով, աւելի պակաս, այն է. վեց բաժակ: Երբեմն հէնց յղութեան սկզբին կինը ստիպուած է լինում շուտ-շուտ միգել և այդ ևս յղութեան ապացոյցներից մէկն է: Իսկ եթէ յղի կինը նկատեց, որ իր մէջը պակսել է, իսկոյն պէտք է հետեւեալ կանոնները գործադրի: Սովորականից աւելի տաք հազնուի, պէտք է ուղղակի մարմնի վրա բրգեղէն (ֆլանել) հազնի, ցուրտ եղանակին տնից դուրս չգա, օրուա մեծ մասը պառկած անցկացնի, և պէտք է, որ քան կարելի է, շատ կաթ գործ ածի:

11. ԿԱԹ

Առհասարակ, եթէ յղի կինը յղութեան սկզբից կաթ գործ ածի, նա դրանով իրան մեծ բարիք արած կլինի և, մինչև իր ազատուելը, ամենամեծ վտանգներից կպաշտպանուի: Այդ պատճառով ամենից լաւն է, օրը երկու անգամ մի - մի քառորդ թէյի բաժակ ընդունել, ամեն երեք կամ չորս օրից յետոյ աւելացնելով մի-մի քառորդ բաժակ: Երբ կհասնի օրական չորս բաժակին, կարող է բաւականանալ այդ քանակութիւնով

մինչև մանկան շարժումը և այնուհետև էլի կարող է աւելացնել օրական մինչև վեց բաժակ: Օրական ոչ պակաս քան չորս բաժակ կաթ ընդունած ժամանակը փորի աճրութիւնն էլ կկանոնաւորուի և ամէն օր փորը կլուծի, մէջի քանակութիւնն էլ կաւելանա, եթէ մէջը այնուամենայնիւ սովորականից պակաս լինի և յղի կնոջ ոտերն ու ձեռները ուռչեն, այն ժամանակ էթի քանակութիւնը պէտք է աւելացնել մինչև վեցութը բաժակ, խառնելով ամէն մի բաժակին երկու հացի զդալ Բորժոմի կամ Նարզանի ջուր և, ի հարկէ, դիմել բժշկի:

Եթէ յղի կինը փորլուծութիւն, արիւն-հոսութիւն կամ սաստիկ հազ ստանա, իսկոյն պէտք է դիմի բժշկի խորհրդին, իսկ եթէ բժիշկ չկա, — այնպիսի փորձուած անձանց, որոնք նրան կարող են օգնել, բայց ամենից առաջ այդ պիսի դէպքերում պէտք է անկողնում պառկել և մաքրութիւն պահպանել:

12. ՅՂԻ ԿԻՆԸ ԵՐՐ ՊԵՏՔ Է ԾՆԻ

Այս բանը իմանալու համար սովորաբար վերցնում են վերջին դաշտանի վերջին օրը, երեք ամիս յետ են գնում և աւելացնում են

եօթից մինչև տաս օր: Օրինակ, եթադրենք թէ վերջին լուսնի վերջին օրը եղել է յունիսի 11-ին, եթէ երեք ամիս յետ գնանք, կլինի մարտի 11-ը, ուրեմն ծնունդը լինելու է մարտի 18-ից մինչև մարտի 21-ը: Ֆրանսիացի նշանաւոր մանկաբարձ Օփարը այսպէս է հաշուում. նա նոյնպէս վեր է առնում վերջին դաշտանի վերջին օրը, օրինակ, յունիսի 11-ը, երեք ամիս յետ հաշուելով, գտնում է մարտի 11-ը և այնուհետև հաշիւ է անում այսպէս. վերջին լուսնի վերջին օրը եղել է մարտի 10-ի և 15-ի մէջ, աւելացնելով 15-ի վրա հինգ, կլինի 20, ուրեմն ծնունդը կլինի մարտի 20-ի և 25-ի մէջ:

Յղութիւնը սովորաբար շարունակում է 265—280 օր կամ 38—40 շաբաթ և այդ ժամանակները ծնուածները արդէն հասունացած են լինում և ընդունակ ապրելու: Բայց պատահում է և բացառութիւն, երբ յղութիւնը շարունակում 300 օր:

Քանի մօտենում է ծննդի օրը, այնքան յղի կինը պէտք է աշխատի մաքրութիւն պահպանել ինչպէս իր անձի, նոյնպէս և իր բնակարանի մէջ: Պէտք է նրա հագած և ծընրողին ժամանակ հազնելու հանդերձները, փոխնորդները, սրբելու և այլ նպատակի գոր-

ծաղրելու իրեղէնները,—բոլորը պէտք է լաւ լուաղած լինեն, լաւ ցամաքեցրած և ութոյած: Բնակարանը, մանաւանդ այն սենեակը, ուր պէտք է ծնունդը կատարուի, ամեն օր պէտք է լաւ մաքրուի. սենեակի յատակը, մինչև անգամ պատերը, դռները ու պատուհանները պէտք է լաւ սրբած լինեն. ինչ որ լուանալ կարելի է, պէտք է սապոնաջրով լուանալ, ինչ որ աւելով կարելի է մաքրել, աւելով լաւ սրբել:

13 Ա. Խ Տ Ա. Հ Ա. Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ամենից լաւ և անվնաս ախտահանիչ նիւթը ֆորմալինն կոչուած դեղն է: Եթէ ծախու ֆորմալինից վեր առնել չորս հացի գդալ և խառնել մէկ վեդրօ (12 լիտր կամ կիլոգրամ) ջրի հետ, այդ խառնուրդով կարելի է յատակներն էլ, պատերն էլ և ամեն իրեղէն լուանալ, առանց վնասելու այդ իրեղէնները: Իսկ եթէ կեղտոտ շորեր, կեղտոտած լուացք և այլ հանդերձեղէն կամենան ախտահանել, յիշեալ խառնուրդից մի քանի վեդրօ ածում են մի խորը տաշտի կամ լողարանի մէջ և այդ բոլոր հանդերձեղէնը ու լուացքը զգում են մէջը ու թողնում 24 ժամ: Ապա այդ իրեղէնները

հանում են ու լուանում սապոնաջրով, սովորական կերպով: *)

Ի հարկէ, ծննդկանի սենեակը պէտք է, որքան հնարաւոր է, ընդհարձակ լինի, բաւականին լոյս ունենա և ձմեռ ժամանակը լաւ տաք լինի:

14. ՄԱՆԿԱՐԱՐՁՈՒՀԻ ԿԱՄ ՏԱՏ

Եթէ ծննդկանի բնակութեան տեղում մանկաբարձուհի (ուսած) կա, պէտք է անպատճառ նրան հրաւիրել, իսկ եթէ ստիպուած են հասարակ տան հրաւիրել, այն ժա-

*) Եթէ կամենան ամբողջ սենեակը ախտահանել, այն ժամանակ վեր են առնում ծախու ֆորմալինից մի ֆունտ, երկու ֆունտ էլ հասարակ, բայց մաքուր ջուր և այդ ամենը ածում են էմալյով օժած մի կաթսայի մէջ և կաթսան դնում են կրակի (կամ նաւթի խոհանոցիկի) վրա, ու խառնուրդի ջրմութիւնը հասցնում են 45 կամ 50 աստիճանի: Յետոյ դռները ու պատուհանները փակում են, նրանց միջի ճեղքերը և ծակերը խցում և 12 ժամից յետոյ բաց են անում, որ օդը սենեակի մէջ փոխուի, որովհետեւ ֆորմալինի զազը և ջրի գոլորշին ամբողջ սենեակը բռնած ունեն և ֆորմալինի հոտը մի քանի օր սենեակի մէջ տիրում է: Այդ կերպով կարելի է և ուրիշ վարակիչ հիւանդութիւններից յետոյ (ինչպէս քութէշից, գիֆտերիտից և այլն) սենեակը ախտահանել, հիւանդի լուացքը և այլ հանդերձեղէնը դնել վերոյիշեալ խառնուրդի մէջ: Որտեղ կամենան փտող կամ նեխող հոտերը ոչնչացնել, այնտեղ իոյնպէս ֆորմալինով կարելի է աւելի շուտով նպատակին հասնել, քան թէ մի օրեկէց այլ նիւթով:

մանակ պէտք է այնպիսին կանչել, որ աւելի մաքուր է: Սովորաբար այդ տատերի եղունգները երկար և նրանց տակը կեղտով լիքն են լինում: *) Պէտք է ստիպել եղունգները կտրակել, ձեռները սապոնով և ջրով լաւ լուանալ, մաքուր շոր հագնել, միևնոյն ժամանակ ծննդկանին շուտ շուտ զննելու իրաւունք չտալ: Երբ ծրնունդը երկարում է, սովորութիւն կա մի քանի տատ հրաւիրել, որոնք ամենքը կեղտոտ ձեռներով զննում են ծննդկանին: Այդ բարբարոսութիւնից պէտք է զգուշանալ. չստանգում ծնունդի ուշանալը վնաս չի բերում ծննդկանին, այլ պառաւանքի կեղտոտ մատներն են, որ խեղճ ծննդկանի մահուան պատճառ են դառնում: Ոչ մի ծննդկան տատմօրը չը պէտք է մօտ թողնի, մինչև որ նա ձեռները լաւ կը մաքրի: Պառաւանքը այնքան ազէտ են, որ որքան էլ զննեն, դժուար դէպքերում ոչինչ օգուտ չեն կարող բերել, աւելի լաւ է թողնել, որ բնութիւնն ինքը վճռի ծննդկանի ճակատագիրը, քան թոյլ տալ այդ պառաւանքին, որ տանջեն ծննդկանին:

Սովորաբար առաջին ծնունդի երկունքը (ցաւերը) միջին թուով 18 ժամ է տևում,


*) Երբեմն էլ մի քիչ զինի կոնծած և մի քիչ էլ սխտոր կերած են լինում...

կարող է և վեց ժամում վերջանալ, բայց կարելի է նաև, որ 48 ժամ շարունակուի, ինչպէս այդ պատահում է հասակ առած կանանց հետ, որոնց առաջին ծնունդը առհասարակ երկար է լինում:

15. ՄԱՆ ՈՒԿԸ ԵՒ ԸՆԿԵՐԸ

Ջաւակատան մէջ մանուկը բարակ թաղանթով փաթաթուած է: Այդ թաղանթի մէջ այնքան ջուր կա, որ մանուկը ամեն կողմից ջրի մէջն է գտնուում և կարող է ազատ շարժուել: Եթէ երեւակայէք մի ձու, որի կճեպը թաղանթը լինի, ձուի սպիտակուցը — ջուրը, իսկ դեղնուցը — երեխան, ասել է, թէ զաւակատան մէջ գտնուում է մի ջրով լիքը փափուշտ, որի մէջ երեխան լողում է: Այդ փափուշտին դրսի կողմից կպած է ընկերը, որը սովորաբար զաւակատան առաջի կա՛յետին պատի վրա է նստած: Ուրեմն ընկերը գտնուում է զաւակատան պատի և փափուշտի մէջ, մի կողմից կպած է փափուշտին, միւս կողմից զաւակատանը: Ջաւակատանից է, որ նա ստանում է արեան երակներ մօր արիւնով: Եւ, յիրաւի, մանկան պորտի շրջանակից անմիջապէս դուրս է գալիս պորտի աղիքը, որը սովոր-

րաբար 50 սանտիմետր ($\frac{3}{4}$ արշին) երկա-
րութիւն ունի, և որը թափանցում է թա-



Մանուկը և ընկերը (Дитенок и место).
ղանթը և մտնում ընկերի մէջ: Այդ պորտի
աղիքի միջով անցնում են արեան խողովակներ


(մի երակ և երկու զարկերակ), որոնցից երկու-
սը մանկան մարմնից դուրս են տանում ան-
պէտք դարձած նիւթերը ու լցնում ընկերի
մէջ (այնտեղից էլ—մօր արեան մէջ), իսկ
երրորդը, ընդհակառակը, բերում է երեխային
հարկաւոր սնունդ (ի միջի այլոց արիւնա-
թըթւում):

16. Ծ Ն Ո Ւ Ն Դ

Ծննդի դործողութիւնը կայանում է
ներանում, որ զաւակատունը պարբերաբար
ամէն հինգ կամ տասը րոպէն կծկուելով, աշխա-
տում է զաւակատան բերանը լայնացնել, որը
մինչև այդ ժամանակ այնքան էր, որ հազիւ մի
մատը կարելի էր մտցնել: Այդ լայնութիւնը
այն աստիճանի պէտքէ հասնի, որ երեխան
կարողանա դուրս գալ: Սովորաբար առաջ զը-
լուխն է դուրս գալիս, իսկ հագուազիւտ դէպքե-
րում—ստորին մասը (ետքը): Զաւակատան
այդ պարբերաբար կծկուելը մեծ ցաւեր է պատ-
ճառում մօրը ամէն անգամ ամբողջ փորում
կամ մէջքում և կամ երկու տեղումն էլ միասին:
Կամաց-կամաց ջուրը հաւաքուելով զաւակա-
տան բերանում, առաջ է մղում երեխայի պար-
կի մի մասը և կազմում է ջրի փամփուշտի

սեպ, որը բաց է անում զաւակատան բերանը:

Սնկային զանգուղի և նրա ղ մզաստի տեսքով



Եւ երբ բերանի լայնութիւնը այնքան է դառն

նում, որ երեխայի գլուխը (ուրեմն և աճրողջ մարմինը) կարող է անցնել, այն ժամանակ ջրի փառնուշտը տրաքւում է, «ջրերը գնում են»: Այդ միջոցին ցաւերը սաստկանում են և դուրս են դրում երեխայի գլուխը: Առաջ ազատւում է գլուխը, յետո ուսերն ու թեւերը և ապա մարմնի ստորին մասը, և երեխան առաջին ճիչն է արձակում:

Երբ երեխան ծնունել է, պէտքէ փոքր սպասել և յետո պորտը երկու տեղ կապել ու երկու կապերի արանքից կտրել: Առաջին կապը պէտքէ անել երեխայի փորից երեք մատ հեռու: Կապելու համար վերցրէք ոչ թէ թել, այլ ժապաւէն, որովհետեւ թելը կարող է կտրուել: Ժապաւէնը, ի հարկէ, առաջուց պիտի լաւ լուացած և ութոյած լինի:

Մանկան ծննդից յետո կէս ժամ սպասում են, որ ընկերը դա: Եթէ չըկա, այն ժամանակ հարկաւոր է փոքր փորը ձեռով կամացուկ շփել և ապա զգուշութեամբ մերսել, մենչև որ ընկերը դուրս գա:

17. Ծ Ն Ն Դ Ի Յ Ա Ռ Ա Ջ

Երկունքի միջոցին, երբ ցաւերը զեռնում ազ են, ծննդկանը կարող է սենեակում ման

գալ: իսկ երբ ցաւերը կսաստկանան, պէտքէ պառկիւ Այդ միջոցին պէտքէ չափաւոր ուտի և այն էլ թեթեւութիւք: Նուազներին հարկաւոր է ստիպել, որ թերխաշ ձու, մի բաժակ կաթ խմեն, իսկ եթէ ծննդից ուժասպառ են եղած—սե կամ կաթով սուրճ կամ մի քիչ գինի խմեն: Ծննդկանք պէտքէ հանգիստ մնա, յուսահատ այս ու այն կողմը չընկնի լալով և աղաչելով, որ իրան օգնեն: Այդ միջոցին առհասարակ ամենքը գլուխները կորցնում են, դէս ու դէն են ընկնում առանց նպատակի, և առանց հետեւանքի: Ի հարկէ, այդ ամենից ոչինչ չի կարող դուրս գալ: Նոյնպէս չպէտքէ թոյլ տալ, որ ծննդկանի մենեակում շատ մարդ հաւաքուի: Առհասարակ ծանօթ-անծանօթ գրացի—ամենքը իրանց կեղտոտ փէշերով և ունամաններով լցւում են սենեակը, իրանց հետ կեղտ ներս բերում, օդը ապականում և զրանով ծննդկանին, օգնելու փոխարէն, վնասնգի ենթարկում:

18. Ծ Ն Ն Դ Ի Ց Թ Ե Տ Ո

Ծննդից յետոյ նոյնպէս հարկաւոր է, որ ծննդկանի շրջակայքում կատարեալ խաղաղութիւն տիրի, ամենքը պէտքէ ցածր ձայնով խօ-

սեն և ոչ գոռալով ու գողտլով: Ծննդկանի հետ շատ քիչ պէտք է խօսել և աշխատել նրան չգրգռել ու չնեղացնել, որովհետեւ դրա հետեւանքը վտանգաւոր արիւնհոսութիւն կարող է լինել:

Կերակուրը առաջի երեք օրը պէտք է թեթեւ լինի: Մտջուր, կաթ, օրական մի կամ երկու հատ թերխաշ ձու, քիչ հաց, այն էլ լաւ թխած, շատ քաց թէյ, հետեւեալ երեք օրը այդ ամենին կարելի է աւելացնել եփած հաւի կամ գառի միս, օրը մի անգամ, իսկ եթէ ծննդկանը թոյլ է, կարելի է մի քիչ գինի ու կաթով սուրճ սույ: Եօթներորդ օրից ըսկըսած, ծննդկանը կամաց կամաց կարող է իր սովորական կերակուրները գործածել, սակայն միայն եփած և խորոված կամ տապակած ուտելիքներ: Հում մրգեղէններ, կանաչի, բոդկ և վարունգ չի կարելի ուտել մինչև երեք շաբաթը լրանալը:

Ծննդկանը առաջին երկու օրը մեջքի վրա պիտի պառկած մնայ երրորդ օրը—կողքի, իսկ չորրորդ կամ հինգերորդ օրը միայն նստի: Նա միշտ պէտք է աշխատի շատ հանդարտ և դուրջ շարժուել, կամ, աւելի լաւ է, որ առաջի անգամները ուղիղ օգնութեամբ կատարի այդ շարժումները, որովհետեւ յանկարծակի


շարժուելը շատ վտանգաւոր հետեանք կարող է ունենալ, և մինչև անգամ կարող է մահուան պատճառ դառնալ:

Ծննդկանի սենեակը առաջին ութ օրերը հիւրեր չպէտք է մտնեն, և եթէ մտնեն էլ, նրանք անկողնուց պէտք է հեռու նստեն, և ոչ թէ (ինչպէս անում են կիսակիրթ կանայք) փողոցներում թափառելուց յետո դան ուղղակի իրանց փոշոտ փէշերով և կեղտոտած կոշիկներով՝ ծննդկանի անկողնու վրա նստեն, կարծելով թէ դա մտերմութեան ու սիրո նշան է: Սակայն դա բարեկամութիւն չէ, այլ չարակամութիւն:

19. ՎԵՐ ԿԵՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Ամեն առողջ ծննդկան կարող է տասնևհինգերորդ օրը վեր կենալ և այնուհետև փոքր առ փոքր իր տան տնտեսութիւնով պարապել: Բայց կան անձինք, որոնք այնքան առողջ են, որ կարող են, առանց վնասի, աւելի առաջ վեր կենալ, միայն պէտք է զգոյշ լինել, որ ցրտի ու խոնաւութեան չենթարկուեն: Վեր կացած կինն էլ կերակրի վերաբերմամբ վերև տուած խորհուրդները պէտք է պահպանի:

Վ Ե Ր Զ



<< Ազգային գրադարան



NL0281078

Կիտամեհա նկարագարդ հանդէս 4—6 նոյնպէս
նկարագարդ զբոյժներով.

Տարեկան բաժանորդագրին է 2 ռ. 50 կ.

Արտասահմանում. . 10 ֆր. կամ $3\frac{1}{2}$ ռ:

Հասցէն. Тифлисъ, редакция «Арогджапaik Терт»
Արտասահ. Tiflis. Redaction «Arogdjapaik Tert»

Վ-ր վ. Արժուճու հրատարակութիւնները.

- 1) Ժանտախտ (մի քանի օրինակ միայն) 20 կ.,
- 2) Խօլերայի մասին (սպառ.), 3) Խօլերա (սպառ.)
- 4) Հիպնոտիզմ, հատ. I. (սպառուած) 25 կ.
- 5) Հիպնոտիզմ, հատ. II. 15 կ., 6) Դպրոցա-
կան առողջապահութիւն (պատկերագարդ) 50 կ.
- 7) Առողջ երեխաների խնամատարութիւն 25 կ.
- 8) Սիֆիլիս, Կակուղ շանկը, Սուսունակ 25 կ.
- 9) Թշուառների բարեկամ բժիշկ Հասաղ 20 կ.
- 10) Ամուսնութիւն . . . 75 կ.
- 11) Աղջիկ (առողջ. և բարոյագիտակ. էտիւզ) 75 կ.

- | | |
|----------------|--|
| Երգչի ԳՐՈՅՆԵՐԸ | № 1. Մի' ԽՄԻՐ, երկ. տ. (նկարներով) 5 կ. |
| | № 2. ՎԱՏ ՅԱԻ (նկ. սպառուած) 6 կ. |
| | № 3. ՎԱՐԱԿԻՉ ՀԻԻԱՆ ԴՈՒԹԻՆԵՆԵ-
ՐԸ ԷԻ ՆՐԱՆՑ ԹՈՅՆԸ (23 նկ.) 15 կ. |
| | № 4. ԹՈՔԱԽՏԿԱՄ ԲԱՐԱԿԱՅԱԻ (նկ.) 10 կ. |
| | № 5. ԴՈՂԵՐՈՅՔ ԿԱՄ ՄԱՆԱՐԻԱ (նկ.) 5 կ. |
| | № 6. ԻՆՖԼՈՒԷՆՑԱԿԱՄ ՆՈՐ ՅԱԻ (նկ.) 3 կ. |
| | № 7. Մի' ԾԽԻՐ 5 կ. |
| | № 8. ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻ-
ԻԱՆ ԴՈՒԹԻՆԵՐԸ (նկ.) 5 կ. |
| | № 9. ՎԱՏ ՅԱԻ ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ, երկրորդ
հրատարակ. Ա. մասն (9 նկ.) 20 կ. |
| | № 10 ՎԱՏ ՅԱԻ ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ Բ. մասն 15 կ. |
| | № 11 ԾԱՂԻԿ ԵՒ ՊԱՏՈՒԱՍՏ 15 կ. |
| | № 12 ՅՂԻ ԿՆՈՉ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹ. 10 կ. |

Լոյս են տեսել «Երգչի թերթիկներ» № 1 «Մի' խմբի»
№ 2 «Նուէր ծնողականներին» ծախ. 100-ը 1 ռ. Դիմել խմբ.

Հղիմակի հասցէն. Միսոխ, Д-ру В. М. Арцруни.